

# ԵՇԱՐԻ ԲՈՅ ՀՈՒՐԸ

ԿԵՐ և ՁԵՐ

50.



84  
Բ-41

ԵՏԿԱՐԻ ԲԱՐԻ ԼՈՒՐԸ

19 NOV 2010



84  
8-41

20 АРГ 2006  
Ապրիլ 2006  
5

# Ետկարի Բարի Լոկրը

Գրեց

Կամ և զեօվք



ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԱՄԵՐԻԿԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
Կ. ՊՈՂԻՍ  
1930

05.09.2013

7613

ՏՊԱՐԱՆ ՍԷԼԱՄԷԹ



51557-65

## ԵՏԿԱՐԻ ԲԱՐԻ ԼՈՒՐԸ

Ա.

Անոյշ փոքրիկ դէմք մ'էր ոսկի գանգուր  
մազերով որ կը պատկէին ձերմակ աղուոր ճա-  
կատը, և մութ կապոյտ աչքերով որ խոհուն  
ու լուրջ նայուածք մը ունէին։ Կակուղ այտե-  
րուն վառ կարմիրը փափուկ առողջութեան  
նշան էր, և անցորդներէ շատեր խղճալով կը  
դիտէին թիկնաթոռի մը վրայ բարձիկներու  
մէջ հանգչող փոքրիկ մարմինը։

Բայց էտկար կարեւորութիւն չէր տար ա-  
նոնց։ Իր աչքերն առջեւի ովկիանոսին ուղղած  
էր, ուշադրութիւն իսկ չընելով ուրախ  
գուարթ տղայոց, որ կը խաղային ու կ'աղմկէին  
աւազէ դղեակներ շինելով ու քանդելով։

Դայեակը գիրքի մը մէջ թաղուած էր, Վար-  
ժուած էր իր խնամքին յանձնուած փոքրիկին  
լուր մնալու տրամադրութիւններուն։ Բար-  
ձիկները տեղաւորելով զայն ժայռի մը շուրբին

6

մէջ դնելէ ետեւ քիչ մը անդին դնաց , տափակ  
քարերու վրայ նստաւ՝ ժամու մը լռութենէն  
օգտուելու համար :

Փոքրիկին բերնէն վերջապէս սա բառերը  
սպրդեցան . «Են՛ դէ ծով , արդեօք յոդնա՞ծ է  
ինծի չափ : »

Երիտասարդ մը , որ քանի մը քայլ անդին  
պառկած էր ծոյլ ծոյլ , յանկարծ վեր ցցուե-  
ցաւ այդ խօսքը լսելով :

«Երանի՛ թէ յոդնած ըլլար ու հանդարտ  
մնար , » ըսաւ :

Էտկար իր խոշոր կապոյտ աչքերն անոր  
ուղղելով ըսաւ ,

«Կ'աշխատի հանդարտիլ , բայց երբ շատ  
յոդնած ըլլանք , չենք կրնար : »

«Մեզ քչող զօրութեան դէմ դնելու կարողու-  
թիւն չենք ունենար : Շատ շիտակ , զաւակս : »

Փոքրիկը լոեց պահ մը : Յետոյ յարեց մեղմ  
ձայնով , «Երէկ կը քնանար , այնքան հանդարտ  
էր : Շատ փոքր շունչ կ'առնէր և կը հետար  
միայն ափերուն վրայ : Այդ ալ ներելի է : Ոչ  
մէկը կրնայ բոլորովին հանդարտ մնալ : »

Երիտասարդը ժպտեցաւ , և երկուքն սկսան  
հանդարտ ու տեսակ մը դանդաղ խօսակցու-  
թիւն , որ արդարեւ տարօրինակ էր բնու-  
թեամբ իրարու բոլորովին հակառակ այսպիսի  
երկու անձերու համար :

«Տաղտկալի աշխարհ է այս , այնպէս չէ՞ , »  
ըսաւ տղան ծերերու յատուկ լրջութեամբ :  
«Դայեակս յաճախ այսպէս կ'ըսէ , ես ալ նոյն  
կարծիքն ունիմ : »

«Մարդ շուտով կը ձանձրանայ անկէ , » պա-  
տասխանեց երիտասարդը դառն ժպտով :

«Միշտ միօրինակ է այն , անակնկալները  
չհաշուելով : Անոնք ալ վերջացած են ինծի հա-  
մար : »

«Ո՞րչափ ժամանակէ ի վեր , տղաս : »

«Կարծեմ , Փարիզի վերջին խաղալիկէս ի  
վեր : Հայրս կ'ըսէ թէ ա՛լ ինծի խաղալիկ պի-  
տի չըերէ , զամն զի անակնկալ հաճոյք մը  
չտուաւ այն : Եւ ինծի համար կարեւորութիւն  
չունին այն բաները որ զիս չեն յուզեր : Կ'ե-  
րեւի թէ այնչափ մեծցած եմ որ այդպիսի բա-  
ներով չեմ հետաքրքրուիր : Ամէն բան նոյն է  
միշտ , այնպէս չէ՞ : »

«Միշտ , ով փոքրիկ փիլիտոփայ , երբ վար-  
ժուած էք անոնց : »

«Այսօր մտածումներուս պահուն ես ինծի  
ըսի թէ արդեօք շատ , շատ զարմանալի բան  
մը պիտի տեսնեմ կեանքիս մէջ : Ի՞նչ երկար  
կը թուի ժամանակը երբ բան մը չպատահիր : »

«Ի՞նչ բան պիտի ուզէիր տեսնել : »

«Օ , չեմ գիտեր : Չեմ ուզեր բան մը որ ա-  
նակնկալ պիտի չըլլայ , բան մը որ զիս — ոք

զիս—պիտի չփոխէ: Կ'ուղեմ կատարեալ, բայց  
կատարեալ գոհացում զգալ, սրտի գոհացում:  
կարծեմ, երջանիկ ըլլալ՝ ըսել կ'ուղեմ: Այս,  
այդ է միտքս: գուք չէ՞ք ուղեր:»

«Դժբախտաբար, այդ տեսակ երջանկու-  
թիւն չկայ այս աշխարհի մէջ:»

«Դայեակը կ'ըսէ թէ կայ, բայց ինք եր-  
ջանիկ չէ: Կարծեմ, միայն գիրքերու և ե-  
րազներու մէջ կայ: Դուք ի՞նչ կ'ըսէք:»

«Ճնորք է և ոչ իրականութիւն. բայց  
դուն տակաւին շատ փոքր ես և այսպէս խօ-  
սելու չես:»

«Սնգամ մը գրեթէ երջանիկ եղայ,»  
պատասխանեց տղան, և աչքերը փայլեցան  
մեղմ ու զուարթ շողիւնով:

«Շատ պղտիկ էի այն ատեն: Ազարակ  
մը գացինք: Շատ յոդնած էի և կին մը հոն  
զիս գրկեց ու տարաւ երկար սենեակ մը՝  
կրակին լուսով ամբողջովին կարմրած: Պա-  
տերուն վրայ ամէն կոպմ պնակներ կային մեծ  
ու փոքր: Ճաշի համար խոզի միս և խնձոր  
կար փուռը դրուած: Կատու մը զանգակ մը  
կը կրէր վզէն կախ: Դայեակս ըսաւ որ պառ-  
կելու եմ: Բայց կինը զիս կուրծքին վրայ  
սեղմելով ըսաւ, Ոչ, ոչ: Սիրեմ անոր ա-  
նուշիկ հոգին. անմայր զաւկի մը երեւոյթն  
ունի:»

«Կինը շատ գէր ու տաքուկ էր: Իրի-  
կունն ամբողջ անոր գիրկը նստայ: Այնչափ  
գեղեցիկ պատմութիւններ պատմեց, որոնց  
նմանը բնաւ լսած չեմ: Հայրս կ'ըսէ թէ ճշ-  
մարիտ չեն անոնք: Բայց կինը կ'ըսէր թէ  
ճշմարիտ են, սակայն հիմա աւելի աղէկ կը  
հասկնամ զանոնք:»

«Սինտըրէլլա և նման պատմավէպե՞ր:»

«Ոչ, ոչ, աւելի սիրուն պատմութիւններ  
հոն վերը գտնուող տեղի մը վրայ,» ըսաւ  
ճերմակ փոքրիկ մատներով երկնից կապոյաը  
ցուցնելով: «Կը մոռնամ անունը. պարիկնե-  
րու տեսակ մը երկիր, ամբողջ սիրոյ և եր-  
ջանկութեան աշխարհ: Նաև կը խօսէր սքան-  
չելի Մարդու մը վրայ որ անկէ հոս եկաւ:  
Կ'ըսէր թէ Ան կը սիրէ զիս, բայց ես մոռցած  
եմ հիմա, և հայրս կ'ըսէ թէ չարժեր յիշել,  
պղտիկները զուարծացնելու համար շնուրած  
պատմութիւններ են անոնք:»

Հետաքրքրական ժամկ մը երեւցաւ մար-  
դուն շրթանց վրայ: Ինք անհանգիստ, գժգոն  
գէմք մը ունէր, որու վրայ արդէն իրենց  
գրոշմը թողած էին վատնուած կեանքի մը և  
փճացած յոյսերու հետքերը: Թէև տարիքով  
բաղդատաբար երիտասարդ, սակայն անառակ  
կեանք մը վարած ըլլալով ծերացած էր: Եւ  
աշխարհի հաճոյքներուն բոլոր տեսակները

վայելած ու սիրոյ մէջ յուսախաբ եղած ըլլա-  
լով սա եղրակացութեան եկած էր թէ չար-  
ժեր ապրիլ:

Մէյմը քովի անմեղունակ փոքրիկ դէմ-  
քին նայեցաւ, մէյմ'ալ վերի անյատակ կա-  
պոյտին:

« Զա՛րժեր յիշել, » մոլտաց. « ոչ, չարժեր  
անշուշտ: »

Լոռութիւն տիրեց: Տղուն մութ կապոյտ  
աչքերն իր նոր ծանօթին դէմքը զննեցին ու-  
շադրութեամբ:

Վերջապէս տարօրինակ կերպով մը « Կը  
սիրեմ ձեզ, » ըսաւ. « վասն զի զիս հասկցողի  
մը ձեւով կը խօսիք: Դայեակը կ'ըսէ թէ եւ  
դժգո՞ն եմ շփացած ըլլալուս և ամէն ուզածա-  
ունենալուս համար: Հայրս կ'ըսէ թէ դժգո՞ն  
եմ տկար ըլլալուս և ուրիշ տղայոց պէս չըլ-  
լալուս համար: Բայց ես չեմ ուզեր ուրիշ  
տղայոց պէս ըլլալ: Անկիրթ ու աղմկարար են  
անոնք, և ասդին անդին վազելէ զատ բան մը  
չեն ըներ: Հանդարտ նստելով չեն խօսիր ինչ  
ծի հետ: Եւ եթէ խօսին, կ'ըսեն թէ տարօ-  
րինակ ես դուն և կը ձգեն կ'երթան: Կը կար-  
ծէ՞ք թէ ես՝ տարօրինակ՝ եմ: »

« Երկուքս ալ մէկ վիճակ ունինք, տղաս:  
Զանձրացած ենք կեանքէն: Եւ անոնք որ-  
դեռ անկէ համ կ'առնեն՝ չեն հասկնար մեզ: »

« Ես երջանիկ ըլլալ կ'ուզեմ, » ըսաւ  
մանչը եռանդով, աչքերն առջեւի կապոյտ  
ովկիանոսին վրայ պտըտցնելով, « բոլորովին  
երջանիկ, կատարելապէս երջանիկ՝ ըսել կ'ու-  
զեմ: Կը կարծէ՞ք թէ պիտի ըլլամ երբեք: »

Երիտասարդը չպատասխանեց: Ճիշտ այս  
պահուն դայեակն եկաւ իր խնամքին յանձ-  
նուած տղուն քով և ըսաւ,

« Տուն երթալու ժամանակ է, պարոն  
կտկար: » Նոյն միջոցին ակնարկ մը նետեց  
անոր նոր ծանօթին վրայ:

Երիտասարդը ոտքի ելաւ, և երիտասար-  
դի ամբողջ ոյժն ու զօրութիւնը յայտնող իր  
մարմնով ծուելով փոքրիկ տկար տղեկին վրայ՝  
հարցուց,

« Ընտանիքին մէկ հատիկն է: »

« Այս, պարոն, շրջակայ այս հոդերուն  
մեծ մասին տէր Սըր Էտմընտ Ուալէսի մէկ  
հատիկ զաւակը: »

Պատկառելի էր շեշտը: Ապա ծոեցաւ,  
կարգի գրաւ բարձիկները և սկսաւ փոքրիկ  
կառքը քշել, աւելցնելով,

« Հայրը օտար երկիր գնաց մէկ երկու ամ-  
սուան համար: Խեղճ տղան առանձին մնաց: »

Սակայն էտկար իր ոսկեգոյն մազերով  
գլուխը շարժեց ու ըսաւ.

« Ոչ, ես առանձին չեմ, և հայրս յաճախ-

յաճախ կը գրէ ինծի: Նամակ ստանալ կը  
սիրեմ, բայց խօսակցիլ ալ աւելի: Վաղը հոս  
պիտի ըլլա՞ք, տէր իմ: Զեմ դիտեր ձեր ա-  
նունը: »

« Հարիւրապետ Կրէյըմ, » ըստ Երիտա-  
սարդը խնդալով: « Այո, թերեւս հոս գտնես  
զիս վաղը: »

Բաժնուեցան: Երիտասարդ Հարիւրապե-  
տը, կամաց կամաց քալեց մրմնջելով, « Սըր  
Էտմընտ Ուալէս, մեծ Սկեպտի՛ կը: Այո, կէս  
մը, և թերեւս աւելի ալ, կը հաւատամ թէ իր  
կողմն է իրաւունքը: »

## ԳԼՈՒԽ Բ

Հետեւեալ առաւօտ այս տարօրինակ զոյ-  
գը նորէն մէկտեղ գտնուեցան: Երիտասարդը,  
հակառակ ամէն բանի հանդէպ իր անտարբե-  
րութեան, կ'ախորժէր կտկար Ուալէսի անոյշ  
ու զարմանալի խօսքերէն:

« Աշխարհի վրայ չկայ մէկը որ կառավա-  
րէ ծովը. կա՞յ արդեօք, » հարցուց փոքրիկը,  
դիտելով բուռն ալիքները որ կո՞նակաբեկի՞ն  
կը զարնուէին ու յետոյ ձերմակ վրիսուրի-  
տարափի մը վերածուելով կը տարածուէին ի-  
րենց առջև ելլող ամէն բանի վրայ:

« Ոչ մէկը, » պատասխանեց անոր բարե-  
կամը: « Զե՞ս գիտեր պատմութիւնն այն թա-  
գաւորին, որ իր գահը աւազներուն վրայ  
դրաւ ալիքներուն յառաջանալու պահուն և  
պատուիրեց որ կանգ առնեն: »

« Ի՞նչ տխմարութիւն: »

« Ուզեց ան իր պալատականներուն դաս մը  
տալ, վասն զի զի՞նք աստուածային կը կար-  
ծէին: »

«Աստուածային ի՞նչ ըսել է :»  
 «Կարող ըլլալ ամէն բան ընել :» Այս պատասխանը վարանումով տրուեցաւ :  
 «Ես պիտի ուզէի աստուածային ըլլալ : Գիտէ՞ք ի՞նչ ընել պիտի ուզէի :»  
 «Ոչ :»

«Պիտի ուզէի հոն, վերը ելլել, սա ձերմակ ամպին քով, ամէն մարդէ և ամէն բանէ հեռու, և հոն պառկիլ ու սպասել մինչեւ մայրամուտի ժամանակ, յետոյ ուզզակի փառքին մէջ մտնել :»

«Ո՞ր փառքին :»

«Տեսած էք դուք — բոլոր այն սիրուն ձերմակ, կարմիր ու սոկեվառ գոյները, որոնց ետին բան մը կենալու է : Դուք պարիկի պատմութիւն կը կարդա՞ք :»

«Կը կարդայի, կարծեմ :»

«Հայրս չուզեր որ շատ գիրք կարդամ : Կ'ըսէ թէ գլուխս չտոկար անոնց, Ես ձանձրացայ անոնցմէ : Ի՞նչ գիրք կը կարդաք դուք : Դայեակը վէպ կը կարդայ, հայրս՝ գիտական գիրք : Կը սիրէ՞ք կարդալ :»

«Ես հիմա Բնութեան գիրքը կը կարդամ, և — քեզ :»

«Պարապ խօսք : Դուք զիս չէք՝ կրնար կարդալ :»

Հոս դէպք մը պատահեցաւ : Էտկարի խո-

շոր շունը, որ միշտ իր փոքրիկ տէրոջ հետ ծովափ կ'երթար, և ուրիշ տղայոց հետ կը խաղար ու յետոյ կը լողար ծովուն մէջ, հիմա իր տէրոջ եկաւ բերնին մէջ քանի մը պատուած թերթով և հաւատարմօրէն անոր թեւին տակ դրաւ :

«Բարի՛ Ռէքս,» ըսաւ տղան զանոնք վեր առնելով : «Ռէքս միշտ ինծի բան կը բերէ ծովէն, բայց գիտէ թէ ես հին կօշիկ և անպէտ բաներ չեմ սիրեր — առաջ կը բերէր, բայց ես վարժեցուցի չըերել : Այս թերթիկները պատմութեան գիրքի մը մասն են : Նայեցէք, ես կը չորցնեմ ու կը կարդամ : Բայց մի ըսէք դայեակին : Զթողուր որ սեւէ բան կարդամ հիմա որ հայրս բացակայ է : Նախ ինք պիտի կարդայ, և յետոյ ես : Կ'ըսէ թէ այս գործը իր պաշտօնին չափ կարեւոր է :»

Տղան զգուշութեամբ շիտկեց թաց թերթեքը և Հարիւրապետ Կրէյքմ անոր ձեռքէն առնելով ըսաւ :

«Մեծ հաւանականութեամբ անպիտան բաներ են, տղաս : Ես պիտի չպահէի գանոնք :»

Սակայն տողերուն վրայ ակնարկ մը նետելէ ետեւ անոր վերադարձուց հետաքրքրական ժպիտով, ու ըսաւ :

«Ամէն պարագայի մէջ քեզի վնաս մը չեն կրնար տալ :»

«Ծատ շնորհակալ եմ: Կ'ուզեմ կարդալ երբ  
դայիակը թէյ առնել երթայ: Կը տեսնէք թէ  
կը ձանձրանամ թէքսի խօսելէ: Միշտ ինծի  
հետ է: Հարիւրապետ կրէյըմ, ինչու չեն խօ-  
սիր շուները: Մենք կը խօսինք:»

«Մենք Բնութեան աւելի կատարելագոր-  
ծեալ արարածներն ենք,» պատասխանեց ան-  
լրջութեամբ:

«Ձեմ կարծեր որ շուները մեղի չափ կը յոգ-  
նին ու կը ձանձրանան: Միշտ երջանիկ կը  
թուին: Հոգ պիտի չընէի ես եթէ շուն ըլլայի:»  
«Առանց հոգիի՞:»

Էտկարի կապոյտ աչքերը լայն բացուեցան:

«Հոգին ի՞նչ է: Խոհարարը երբեմն՝ Հոգի՞ս ր  
հոգի՞ս,՝ կ'ըսէ. հարցուցի թէ ի՞նչ է այն,  
խնդաց ու ըսաւ՝ Զուկ: Սակայն չհաւատացի:  
Հօրս հարցուցի, և ըսաւ թէ ոմանք կը կար-  
ծեն թէ հոգի ունին, բայց գիտութիւնը կ'ը-  
սէ — չեմ գիտեր ի՞նչ, մոռցայ: Դուք ի՞նչ բան  
հոգի կը կոչէք:»

«Ծատ խորերը կը միմրձինք: Կարծեմ, նիւ-  
թը փոխելու ենք: Ե՞րբ պիտի գայ հայրդ:»

«Ծատ պիտի ուշանայ: Հոգին ի՞նչ է, Հա-  
րիւրապետ կրէյըմ:»

«Վստահ եղիր, ես ալ չեմ գիտեր: Կը կար-  
ծուի թէ մեր այն յատկութիւնն է որ մեզ ա-  
նասուններէն գերազանց կ'ընէ: Դուն քեզ  
թէքսէ աւելի խելացի չե՞ս կարծեր:»

«Ոչ, մեր միակ տարբերութիւնը սա է որ  
ես կրնամ խօսիլ ու կարդալ և ան չկրնար+  
թայց խոհարարին հայրն ալ չկրնար կարդալ,  
և դայեակը կ'ըսէ թէ ինք կը ձանչնայ մէկը որ  
չկրնար խօսիլ: Կերպարանով իրարու շատ  
նման չենք: Դուք ի՞նչ կ'ըսէք:»

Հարիւրապետ կրէյըմ գլուխը ետ հրելով  
բարձրաձայն խնդաց:

«Ոչ շատ, տղաս, անշուշտ:»

«Դիտէք, օր մը դայեակն ու քոյրը իմ  
վրաս խօսելով, կը խորհին թէ արդեօք պիտի  
ապրիմ ու մեծնա՛մ: Ես ալ մտիկ ըրի և քոյրն  
ըսաւ ինծի համար, և նեղճ տղայ, հայրն ալ կը  
կարծէ թէ շան պէս պիտի մեռնի: Շունն  
ի՞նչպէս կը մեռնի, Հարիւրապետ:»

«Կը վերջանայ, կը լմնայ, մոմի պէս  
կը մարի: Իբր թէ մենք այնպէս չենք ըլ-  
լար:»

Էտկարի եռանդուն նայուածքը խոռվեց  
Հարիւրապետը:

«Ի՞նչ կ'ուզէք ըսել, բացատրեցէք: Ի՞նչպէս  
կը մեռնինք:»

«Հայրդ ի՞նչ կ'ըսէ:»

«Ան չուզեր որ մահուան վրայ խօսիմ: Բայց  
անգամ մը ըսաւ թէ քնանալ ու չարթննալ է+  
Շունն ա՞յդպէս կը մեռնի:»

«Կարծեմ թէ:»



Հոեցին երկուքն ալ, և սկսան ծովը դիտել  
ու մտածել:

Վերջապէս էտկար խոր հառաչ մը արձակեց  
ու ըստ,

«Ես լման ձանձրացած եմ: Ժամանակը շատ  
ծանր կ'անցնի և ամէն բան միշտ նոյն է,  
փոփոխութիւն չկայ բնաւ:»

«Երկուքիս համար ալ կեանքը հրապոյր  
չունի: Այնպէս չէ՝, տղաւ:»

Էտկար առանց պատասխանելու շիտկեց գիր-  
քին էջերը զորս ձեռքին մէջ բռնած էր: Եւ  
սկսած ծանր, ծանր կարդալ,

«Աւետարան — ըստ — Մարկոսի: Ի՞նչ զար-  
մանալի անուն:»

«Աւետարանն ի՞նչ է, Հարիւրապես:»

«Կարծեմ Բարի Լուր՝ կը նշանակէ:»

«Ճշմարիտ պատմութիւնն է այս:»

«Այնպէս կը կարծեմ:»

«Դուք կարդացած էք:»

«Այս, կը կարդայի երբ փոքրիկ տղայ էի:»

«Միայն պղտիկ տղայոց յատուկ է:»

«Շատեր կը կարդան: Ծովուն նայէ,

ի՞նչպէս կը դուայ այս առաւօտ:»

Էտկարի կապոյտ աչքերը ծովուն կողմ  
դարձան:

«Երբեմն կը բարկանայ: Այս առաւօտ  
կիրք ելած է բոլորովին և մէ՛կը չկրնար զըս-

պել զայն: Շատ կ'ուղէի տեսնել մէկը որ կա-  
րող է զսպել: Կ'ուղէ կոհակաբեկն անցնիլ,  
բայց չկրնար: Ահա բան մը որ կարող է զայն  
կեցնել: Ի՞նչ օգուտ ունի ալիքներուն գո-  
ռում - գոյսումը: Բանի մը չծառայեր անոնց  
սաստկութիւնը:»

«Կարծեմ կ'ախորժին իրենք: 'Եկէք, տա-  
պալինք սա նաւալը,' կ'ըսեն: 'Զուարձալի է  
տեսնել ազատման ճիգերը զորս մարդիկ կ'ը-  
նեն անդարձ կերպով ընկղմելէ առաջ: Յետոյ  
վախցնենք տղաքը և քանդենք ծիծաղելի ամ-  
րոցները զոր կը շինեն աւազով: Եթէ քիչ մ'ալ  
յառաջանանք ու աւելնք տանինք աւազին  
վրայ գտնուող ամէն արարած, ի՞նչ փառաւոր  
գուարձութիւն կ'ըլլայ մեղի:」 Զէք կարծեր  
որ կ'ուղեն մեղ ալ առնել տանիլ, էտկար:»

«Շատ անզգամ կը ներկայացնէք զանոնք:  
Քիչ յետոյ պիտի զղան իրմանց բռնութեան  
համար և պիտի ջանան քնանալ: Ես ամէնէն  
շատ այդ ժամանակ կը սիրեմ զանոնք:»

Քանի մը օր գաղրեցան այս զոյգին խօ-  
սակցութիւնները, վասն զի Հարիւրապետ Կրէ-  
յըմ գործով լոնտոն գնաց: Շաբաթ մը յետոյ  
երբ վերադարձաւ, ծովափին վրայ թափա-  
ռելու պահուն, գարձեալ պատահեցաւ հի-  
ւանդակիր կառքին ու անոր մէջ գտնուող  
փոքրիկ տղուն:

մարդոց մին եմ։ Գնա հասկցիր թէ ո՞րչափ  
մհծէլ քու գրաւիչ զօրութիւնդ։»  
«Կ'ուզեմ որ, » ըստ Էտկար ցած ձայ-

## ԳԼՈՒԽ Գ

«Ինծի նայէ, պղտիկ բարեկամ։ Շատ  
ուժով կ'երեւիս։ Բժիշկներն ի՞նչ ըրին քեզի։»  
Էտկարի խոնջութիւնն ու ձանձրոյթը  
անհետացած էին իրօք, և արտայայտիչ փոք-  
րիկ դէմքին վրայ լուրջ եռանդ ու հետա-  
քրքրութիւն կ'երեւէին։

Փոքրիկ մատը հինօրեայ տարօրինսակ ու  
ձով մը շրթունքին դնելով և աչքը դայեակին  
ուղղելով՝ Հարիւրապետին երկարեց իր ձեռ-  
քը։ Եւ անոր ուժեղ ու յաղթ կազմին նայե-  
լով ըստ շատ անոյշ ձայնով,


«Զիս կը սիրէ՞ք, Հարիւրապետ Կրէյլմ։»

«Ո՞վ չսիրեր քեզ, գրաւիչ մանչուկ։»

«Բայց ըսէք ինծի, կը սիրէ՞ք զիս։»

Հարիւրապետ Կրէյլմ անկեղծօրէն իրն-  
դաց մանչուն նայելով։

«Լեզուիդ տակ բան մը կայ, Էտկար։  
Յայտնէ շուտով։ Գիտե՞ս, այս առաւօտ յա-  
տուկ քեզ տեսնելու համար այս կողմն եկայ։  
Հսկմ քեզի թէ ես ամէնէն ծոյլ ու անձասէր



նով և շոյելով անոր ձեռքը զոր տակաւին  
բռնած էր, «Կ'ուզեմ որ զիս վերցնէք կառ-  
քիս մէջէն և տանիք հոն այն ժայռին վրայ

ու ձեր ծունկին վրայ նստեցնէք հօրս պէս :  
Բայց նախ ըսէք դայեակին , ապա թէ ոչ՝ մեր  
ետեւէն կու գայ : Իսկ ես կ'ուզեմ առանձին ու  
մտերմական խօսակցութիւն մը ունենալ ձե-  
զի հետ : »

Տղուն այս փափաքին գոհացում տալը  
երկար չտեւեց : Հարիւրապետ Կրէյըմ անոր  
փոքրիկ թեթև մարմինը զօրաւոր իր թեւե-  
րով գրկելու պահուն ըսաւ ,

« Ետկար , հովի թեթև փուք մը պիտի  
կրնայ թոցնել քեզ : »

« Շատ ծանր չեմ , այնպէս չէ : Հիմա ,  
խնդրեմ , մտիկ ըրէք , որովհետև միտքս այն-  
չափ լեցուն է որ պէտք է խօսիմ անպատճառ :  
Այնչափ կը փնտոէի ձեզ : Կը տեսնէք , չցու-  
ցուցի դայեակին , Զգիտեր թէ քովս է : Ես ու  
դուք զիրար կը հասկնանք : Դուք զիս դժոհ  
ու դժուարահաճ չէք կոչեր , վասն զի դուք ալ  
ինծի պէս կ'զգաք : Կը հասկնաք միտքս — դուք  
ալ ինծի պէս յոդնած ու ապերջանիկ էք և  
նոր բան կ'ուզենք փոխանակ հինի : »

« Ճիշտ այդպէս , ով իմ փիլիսոփաս : Շա-  
րունակէ : Մտիկ կ'ընեմ : »

Ետկարի աչքերը փայլեցան և անոր այտե-  
րուն կարմրութիւնն աւելցաւ , երբ իր գրպա-  
նէն դուրս հանեց զգուշութեամբ թուխ թուղ-  
թի ծրարիկ մը : Կամաց կամաց բացաւ ծրարը

և Հարիւրապետ Կրէյըմի հետաքրքիր աչքե-  
րուն առջեւ պարզեց Նոր Կտակարանի այն  
էջերը զորս տուն տարած էր քանի մը որ առաջ :

« Դուք ըսիք թէ ձմարիտ է , Հարիւրապետ ,»  
ըսաւ տղան գլխու հաստատական շարժումով ,  
«և զարմանալի է : »

« Այո : Ուրախ եմ որ այդպէս կը խորհիս : »

« Բայց , դուք երեք կարդացած էք , Հա-  
րիւրապետ : Ի՞նչ պատմութիւն , ի՞նչ պատ-  
մութիւն և ի՞նչ բարի մարդ : Կը սիրեմ զինք :

Երէկ գիշեր անկողնիս մէջ լացի որ ես չապրե-  
ցայ անոր օրով : Երանի՛ թէ ապրէի , երանի  
թէ տեսնէի զինք : Ո՞րչափ բան կայ որ չեմ  
հասկնար , և ո՞րչափ բան կայ որ կ'ուզեմ ձեզի  
հարցնել : Գիտէք , կարող էր ամէն բան ընել :

Երեւակայեցէք : Օր մը ծովու վրայ էր քանի  
մը հոդիով : Շատ յոցնած ըլլալով գլուխը բար-  
ձին դրաւ ու շուտով քնացաւ : Ծովը երթա-  
րով կատղեցաւ , և ջուրերն սկսան նաւակը  
մտնել : Եւ գեռ ինք յոցնած կը քնանար : Միւս  
մարդիկն այնպէս վախցան որ արթնցուցին  
զայն ու ըսին , Հոգդ չէ որ կ'ընկղմինք : Ի՞նչ  
ըրաւ կը կարծէք : Ելաւ կայնեցաւ ու նայեցաւ :

Տեսաւ կատաղի ալիքները , և նաւը ընկղմել  
սպառնացող ծովը , և ըսաւ միայն , Գաղարէ ,  
լուռ կեցիր : Եւ ամէն բան խաղաղեցաւ : Զէի՞ք  
ուզեր հոն ըլլալ : Աւելին կայ : Ուրիշ անդամ

մը մարդիկ նաւով կ'երթային, և փոթորիկ  
եղաւ: Ինք ալիքներուն վրայէն քալելով ա-  
նոնց քով գնաց և խաղաղութիւն եղաւ:»

Ծովուն կողմը նայելով տղան խանդալառ-  
ուեցաւ և ձեռքը երկարելով սապէս ըսաւ իբր  
թէ ծովուն: «Հիմա մէ՛ կը չկրնար քեզ զսպել,  
բայց ատենօք զսպուեցար, և ի՞նչ վսեմ կեր-  
պով: Կ'ուզէի քեզ կոխոտուած տեսնել անոր  
տաքերուն տակ: Ոհ, Հարիւրապետ, ինչո՞ւ  
քնաւ չխօսեցաք ինծի այս զարմանալի Մար-  
գուն վրայ:»

«Քու հայրդ իրաւունք ունի — գուն մոլե-  
սանդ մը պիտի ըլլայիր, եթէ — » Հոս կանգ  
առաւ հարիւրապետը, բայց էտկար վեր նայե-  
ցաւ եռանդագին ու հարցուց,

«Աստուած ո՞վ է, Հարիւրապետ Կրէյըմ:»

«Տղաս, շատ խորին խնդիրներ կը պրապտես:  
Լաւ կ'ըլլայ որ այդ գիրքն ինծի տաս և բո-  
լորովին մոռնաս զայն:» Եւ Հարիւրապետն  
իր մատները ուսին վրայ հանդչող ոսկի գան-  
գուր մազերուն մէջ պտըտցնելով անհանդիստ  
երեւոյթ մը առաւ:

«Սակայն պէտք է գիտնամ: Մոռնա՞լ: Մի-  
թէ կրնա՞մ: Եւ ամբողջ ձշմարիտ է: Կ'զգամ  
թէ ձշմարիտ է: Դուք ալ ըսիք:»

«Ե՞ս ալ ըսի: Չեմ կարծեր:»

«Հարիւրապետ Կրէյըմ, ձշմարիտ չէ՞:»

Ամէն վստահութեամբ ու անմեղութեամբ  
իրեն ուղղուող կապոյտ աչքերուն զարմանքը  
յանկարծ կեցուց երիտասարդին շրթանց վրայ  
եկող ժխտական պատասխանը: Վասն զի, թէւ  
անոր փոքր հաւատքը գրեթէ մարած էր իր  
վրայ յարձակող տարակոյսները կամաւ ընդու-  
նած ըլլալուն համար, տակաւին անոր սրտին  
խորերը կը մնար յիշատակը մայրական հաւատ-  
քին ու հրահանգներուն և այն օրերուն, երբ  
ինք ալ մտիկ ըրած էր նոյն հին պատմութիւն-  
ներուն, որոնք հիմա իր ծունկին վրայ նստող  
մանկան ամբողջ ուշադրութիւնը կը գրաւէին:

«Շահեկան պիտի ըլլայ գիտել թէ ի՞նչ ազ-  
դեցութիւն պիտի ընէ թելալըրութիւնս անոր  
վրայ,» ըսաւ մրմնջելով և յետոյ բարձրածայն  
ըսաւ,

«Այո, էտկար: չեմ ըսեր թէ ձշմարիտ  
չէ անոնց համար որոնք կրնան այդպէս ըն-  
դունիլ:»

«Ուրիմն Աստուած ո՞վ է, Հարիւրապետ  
Կրէյըմ: վասն զի այս Մարգը անոր Որդին է:»

«Աստուած ստեղծեց աշխարհը,» պա-  
տասխանեց երիտասարդը դժկամակութեամբ:  
«Ան է որ ստեղծեց ամէն տեսածդ և տակա-  
ւին — ինչպէս կ'ըսեն — կը կառավարէ ամէն  
բան, թէւ ինք անտեսանելի է մանկանացու-  
աչքերու:»

«Եւ հիմա կ'ապրի՞ տեղ մը, » հարցուց  
տղան:

«Ան չմեռնիր երբեք: »

«Ո՞ւր է: »

«Ամէն տեղ է, կը կարծուի: »

«Չեմ հասկնար — Դրախտն ո՞ւր է: Վեր  
երկի՞նքը: Որովհետև կ'ըսէ թէ Յիսուս  
‘վեր երկինք առնուեցաւ Աստուծոյ աջ կողմը, ’ Եւ ես օր մը լսեցի որ մարդ մը ըսաւ  
թէ աղէ՞կ որ վերը գրախտ մը կայ: Հարցուցի  
հօրս թէ այդ ի՞նչ ըսել է, ըսաւ թէ դըրախտը երկինքի մէկ ուրիշ անունն է: Ոհ,  
Հարիւրապետ, ո՞չչափ բաներ կ'ուզեմ գիտնալ,  
շուտ ըրէք, խօսեցէք ինծի: Յիսուս տակաւին ո՞ղջ է: Հիմա, այսօր ո՞ղջ է: Վասն զի,  
գիտէ՞ք, շատ դարմանալի էր: Մեոցուեցաւ —  
ոհ, ի՞նչ սոսկալի պատմութիւն: — Լացի, լացի  
ու լացի: Բայց չխորհեցայ թէ վերջը այնչափ բարի պիտի ըլլար: Թաղուելէ ետքը նորէն կենդանացաւ և չեմ ուզեր որ նորէն  
մեռնի: Ո՞ղջ է այսօր: Շատ կանո՞ւխ գրուցաւ այս պատմութիւնը: »

«Պէտք է որ մէկ հարցում ընես մէկ անգամէն, տղաս: Ո՞րքան ալ դիւրագրդիո ետքուն: Նայէ, գլխէդ մինչև ոտքդ կը դողաս: Փոխենք նիւթը: Այսքան յուզումի արժանիքան չկայ այս աշխարհի վրայ: »

«Բայց ուրիշ աշխարհի վրայ է այս, և  
գիտնալ ուզածս ալ այդ է: Ուրիշ աշխարհ  
մը կա՞յ: Ի՞նչպէս կրնանք հոն երթալ: Եւ  
Յիսուս հո՞ն է: Ոհ, Հարիւրապետ կրէյլմ,  
ըսէք ինծի, եթէ դիտէք: »

Էտկար փոքրիկ ձեռքին ետեւի կողմը աչքերուն տարաւ աճապարանքով, բայց չկրցածածկել արցունքները որ արդէն կը հոսէին: Եւ Հարիւրապետ կրէյլմ հասկցաւ թէ տղուն հոգիին խորերը յուզուած էին, և թէ այս թեթև հարց մը չէր անոր համար:

«Էտկար, տղաս, քեզի պիտի ըսեմ ինչ որ ըսուած է ինծի: Հիմա մտիկ ըրէ: »

Կամաց կամաց և սոսէպ կանդ առնելով, բայց իրեն ուղղուած կապոյտ աչքերուն բուռն եռանդէն ու ակնկալութենէն քաջալերուելով, Հարիւրապետ կրէյլմ պատմեց այն հին, հին պատմութիւնը: Նախ քանի մը բառ խօսեցաւ արարչագործութեան վրայ, յետոյ մեղքի աշխարհ մտնելուն և փրկագործութեան ծրագրին վրայ, և բացատրեց թէ հանդերձեալ կեանք կայ ամէն հաւատացեալ հոգիի համար: Էտկար երեմն կը կեցնէր զայն իր հարցումներով, որ աւելի պարզ բացատրութիւն կը պահանջէին:

Ժամանակը շուտ անցաւ, և Էտկարի դայւեկը մօտենալով ըսաւ,

«Վստահ եմ, շատ ազնիւ է պարոնը որ այս-

Հափ նեղութիւն յանձն առաւ քեզի համար,  
Էտկար: Քիչ անգամ կը պատահի, տէր իմ, որ  
այսքան յարի անծանօթներու: Առանձնութիւն  
կը սիրէ առ հասարակ:»

«Հարիւրապետ կրէյըմ, վաղը հոս պիտի  
ըլլա՞ք:»

«Կարելի է:»

«Դլուխս այնչափ լեցուն է որ կ'ուզեմ խոր-  
հիլ տակաւին: Բայց հասկնալու շատ բան ու-  
նիմ դեռ:»

«Հոգ տար որ այդ պղտիկ գլուխդ չպայթի:  
Կարծեմ թէ մէջի ուղեղը շատ է անոր համար:»

Եւ Հարիւրապետ կրէյըմ, այն փոքրիկ կառ-  
քին հեռացումը դիտելու պահուն, շիտկուելով  
ձգտեցաւ և խնդալով ըստ իւրովի,

«Աշխարհ ու Սատանայ պիտի ապշէին կար-  
ծեմ, եթէ լսէին թէ ի՞նչպէս խօսեցայ ես այս  
առաւօտ: Կ'արժէ թերեւս որ քարոզութիւն  
սկսիմ փոփոխութեան մը համար:»

## ԳԼՈՒԽ Դ

Երբ դարձեալ մեսնուեցան, Հարիւրապե-  
տին ուղղուած փոքրիկ դէմքին վրայ լուրջ  
արտայայտութիւն մը կար:

«Զեզի բան մը պիտի տամ, Հարիւրապետ:  
կ'ուզեմ որ հաճիք հասցէն գրել ու դրկել ինծի  
համար:»

«Նամա՞կ է:»

«Այո! կարդացէք նախ, եթէ կ'ուզէք: Կա-  
րելի է, չգրեցի պատշաճ կերպով:» Մեծ զգու-  
շութեամբ ու ակնածութեամբ էտկար իր գըր-  
պանէն պահարան մը հանեց ու Հարիւրապե-  
տին ձեռքը դրաւ: Յետոյ աչքերն ուշադրու-  
թեամբ ուղղեց իր բարեկամին, որ նամակը  
քանի մը անգամ դարձնելէ հտեւ սկսաւ կար-  
դալ:

Եթէ Հարիւրապետը նամակին պարունա-  
կութեան վրայ զարմացաւ իսկ, բնաւ չյայտ-  
նեց: Հարկաւ պեխերուն ծայրերը քաշեց ու  
յօնքերը պաստեց, երբ դուրսի անունը տեսաւ:  
Բայց քանի՛ յառաջացաւ, աւելի մեղմ արտա-

յայտութիւն մը ստացաւ դէմքը, և գրեթէ ակ-  
նածանքով ծալեց ու պահարանին մէջ զետեղեց  
տղու դողդոջուն ձեռքով գրուած կարձ նամակը:  
Ահաւասիկ այն.

«Առ Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ:

«Սիրելի Յիսուս,

«Խորհեցայ գրել և ըսել ձեղի թէ ո՛րքան  
կը սիրեմ ձեզ: Երանի թէ աւելի առաջ տեղե-  
կութիւն ունենայի ձեր վրայ: Ուրախ եմ սա-  
կայն որ ողջ էք: Երանի թէ ես անոնցմէ  
մէկն ըլլայի որ ձեր գիրկն առիք այնքան  
սիրով: Բան մը կ'ուզեմ հարցնել ձեղի. Թոյլ  
կու տա՞ք որ երկինք գամ ձեղ տեսնել: Զեմ  
գիտեր թէ երկինք ո՛ւր է, բայց թերեւ դուք  
ինձի մէկը կը դրէք: Շատ կը փափաքիմ հոն  
գայ: Բարեկամո, Հարիւրապետ Կրէյըմ, կ'ըսէ  
թէ դուք մեղաւորները փրկելու համար մեռաք:  
Ես չեմ գիտեր թէ մեղաւորն ի՞նչ է, բայց պի-  
տի հարցնեմ անոր:

«Կարծեմ ձեզ մեղնելը մեծ չարութիւն  
էր, բայց չկրցան: Շատ ուրախ եմ ասոր հա-  
մար: Կը յուսամ թէ կը պատասխանէք նամա-  
կիս և կը յայտնէք թէ ստացած էք ու կ'ար-  
տօնէք որ ձեղ տեսնեմ:

«Չերդ սիրով  
«Էտկար Ուալէս»

«Աղէկ է, Հարիւրապետ Կրէյըմ: Պիտի  
Կրնա՞ք այս նամակը անոր դրկել:»  
Էտկարի ձայնին մէջ անձկութիւն կար:  
«Ոչ, տղաս, չեմ կրնար: Քու խելացի փոքր  
գլխուդ ի՞նչ եղաւ որ այսպիսի բան կը խոր-  
հիս: Ի՞նչպէս պիտի երթաց այս նամակը:»  
Էտկարի շրթունքը դողդղաց: «Կարծեմ —  
Կարծեմ — հեռագրով — օդապարիկով — կամ  
տրիշ միջոցով մը որ ձեղի ծանօթ կրնայ ըլլ-  
յալ: Ոչ, Հարիւրապետ, անշուշտ կերպ մը կե-  
նալու է: Կ'ուզեմ որ Ան ստանայ նամակս:»

Տղան գսպեց լացը զոր յանկարծ սկսաւ:  
Եւ Հարիւրապետը, որու գիրկը նստած էր,  
քաշեց անոր գանգրահեր գրուխը և իր ուսին  
կրթնցուց՝ ջանալով զայն հանդարտեցնել:

«Մի լար, տղաս, նամակ գրելու պէտք  
չկայ: Եթէ աղօթք ընես, կը բաւէ:»

«Աղօթքն ի՞նչ է,» հարցուց էտկար հե-  
կեկալով:

«Խօսիլ անոր, ինչպէս ինձի կը խօսիս:  
Ան ամէն բան կը լսէ: Աստուած է, գիտես, և  
Աստուած Հոգի է: Մեր քով է հիմա, թէւ չենք  
տեսներ զինք: Կը բաւէ որ խօսիս, և ինք կը  
լսէ անմիջապէս:»

«Պարիկներուն պէս,» ըսաւ էտկար և  
վերցուց թաց աչքերը, որոնց մէջ նոր յոյս մը  
կը շողար:

«Պարիկներուն։ Կը հաւատա՞ս անոնց ուն, ի՞նչ հետաքրքրական տղայ ես։ Կը հաւատա՞ս դուն ամէն կարդացածիդ։»

«Երբեմն կը հաւատամ պարիկներուն, բայց ոչ միշտ։ Եւ կարծեմ ապուշ բաներ են, այնպէս չէ։ Բայց պարիկի վրայ մի խօսիք։ Յիսուս կրնա՞յ լսել ի՞նչ որ ըսեմ և ե՛րբ որ ուզեմ խօսիլ իրեն։ Իրա՞ւ կ'ըսէք։»

«Այո, կը լսէ։»

Էտկար լուռ կեցաւ պահ մը, յետոյ աչքին զարկաւ նամակը։ Եւ տխրութեամբ ըստ,

«Ուրեմն պէտք չկայ ատոր, պատում՝ երթայ։»

Հարիւրապետ կրէյըմ դարձեալ հանեց նամակը պահարանէն և կրկին կարդաց — կէս մը զրւարձանալով, կէս մը արդահատելով։ Ապա յանկարծ հով մը ելաւ, ճանկին մէջ առաւ թրթոռն թուղթը և օդին մէջ թոցնելով տարաւ զայն յաղթանակաւ, մինչեւ սներեւոյթ եղաւ ժայռին անկիւնը դառնալով։

Էտկար անոր ետեւէն նայեցաւ բաց բերանով ու կասկարմիր այտերով։ Ապա գդուշաւոր մրմունջով մը ըստ,

«Աստուած հովին հրամայեց իրեն տանիլ գայն։ Ըսել է թէ կ'ուզէ տեսնել, այնպէս չէ։»

«Այնպէս կ'երեւի։»

«Շատ ուրախ եմ, Ո՞րքան ժամանակ տուի գրելու համար։ Հիմա, մեղաւորն ի՞նչ է, Հարիւրապետ կրէյըմ։»

«Մեղք գործող — չար բաներ ընող — ամէն մարդ չար է։ Ի՞նչ որ ուղիղ չէ՝ մեղք է։»

«Դայեակը կ'ըսէ թէ սուտ խօսիլ, բան պահել ուղիղ չէ։ Ըսել է՝ ես ալ մեղաւոր եմ — դայեակէն պահեցի Յիսուսի այս պատմութիւնը։ Ծուռ բան չէ այս։»

«Կը կարծեմ։»

«Դուք մեղաւո՞ր էք։ Այսինքն երբ գուք իմ տարիքս էիք, մեղաւոր եղա՞ք։»

«Ամէնս ալ մեղաւոր ենք, Էտկար։ Մարդորչափ մեծնայ, այնչափ աւելի մեղաւոր կ'ըլլայ։ Այո, բաւական մեծ մեղաւոր եմ։»

«Ի՞նչ ուրախ եմ,» ըստ էտկար ցնծութեամբ։ «Ուրեմն Յիսուս ձեզի համար և ինձի համար մեռաւ։ Լման չեմ հասկնար թէ այս ի՞նչ կը նշանակէ, բայց աղէկ բան ըլլալու է, ինչպէս ըսիք գուք։ Նորէն պատմեցէք թէ ի՞նչո՞ւ մեռաւ։»

«Իրօք, Էտկար, ես անկարող եմ բացատրել։ Քու գիրքդ կը բացատրէ։»

«Դժուար է գիրքն հասկնալ։ Հարիւրապետ կրէյըմ, գուք երէկ ինձի խօսեցաք անոր վրայ։ Նորէն խօսեցէք։»

« Հաւ . եթէ չմեռնէր Յիսուս , չէլինք կը բ-  
նար երկինք երթալ . հիմա կրնանք : »  
« Ե՞րբ կ'երթանք : »  
« Երբ մեռնինք : »  
« Բայց ես լսած եմ որ հողին մէջ կը թա-  
ղեն մեռելները : Ի՞նչպէս կրնան ուրեմն եր-  
կինք երթալ : »  
« Թաղուածը անոնց մարմինն է միայն :  
Մենք հոգի ունինք , ինչպէս կ'ըսուի : Մահ-  
ուան ժամանակ հոգին կը թողու մարմինը և  
երկինք կ'երթայ : »  
« Գեղեցիկ բան , » գոչեց էտկար շողա-  
ղուն աչքերով : « Հիմա ըսէ թէ երկինք ինչի  
կը նմանի : »  
« Զեմ գիտեր , գացած չեմ հոն , » ըսաւ  
Հարիւրապետը կատակախօսի ժպիտով :  
« Բայց դուք երէկ բաւական բան ըսիք  
անոր վրայ : »  
« Այդ ամէնը Սր . Գիրքն է որ կ'ըսէ : »  
« Սր . Գի՞րքը : Հայրս ինծի կ'ըսէր թէ  
այդ գիրքը պզտիկ տղայց համար չէ : Օ՞ն ,  
ինծի խօսէ երկինքի վրայ : »  
« Պարիկի տեսակ մը երկիր է , էտկար :

Բարութեան և երջանկութեան երկիր , գոյ ա-  
մէն ոք և ամէն բան կատարեալ է : Հոն հոգ  
չկայ , ոչ ալ դրամական կագ ու կոիւ : Հոն  
խարերայ , կեղծ ու պատիր ոչ մէկ բան կայ :

Երջանկութիւնը խանգարող ոչ մէկ կեղծիք ,  
պատրուակ : »  
« Յիսուս ալ հո՞ն , » ընդմիջեց տղան ցած  
ձայնով : « Այդ պիտի ըլլայ ամէնէն պատրու-  
կանը : Եթէ զիս ալ իր գիրքն առնէ , երջա-  
նիկ , յաւիտեան երջանիկ պիտի ըլլամ : Կը  
կարծի՞ս թէ կ'առնէ : »  
« Կ'առնէ , կը կարծիմ : »  
« Բայց ինչո՞ւ չենք կրնար երկինք երթալ  
առանց Յիսուսի : Այդ է որ չեմ հասկնար : »  
« Վասն զի Աստուած չկրնար թոյլ տալ  
որ մեղաւոր մը երկինք մտնէ : Ինք ըսաւ թէ  
մենք պատժուելու ենք մեղքի համար , և այս  
կը նշանակէր թէ յաւիտեան զատուելու ենք  
Աստուածմէ : Այն ժամանակ Յիսուս Քրիստոս  
ըսաւ թէ ինք մեղաւոր չըլլալով կրնայ մեր  
տեղը պատժուիլ : Ուստի երկինքէն երկիր ի-  
շաւ և հոս բարի կեանք մը ապրեցաւ , որ-  
պէս զի ցուցնէ թէ ի՞նչպէս ապրելու ենք : Եւ  
երբ մեռաւ , ինք իր վրայ առաւ բոլոր մեր  
մեղքերը , ինչպէս կ'ըսուի , և Աստուած ներ-  
քեց մեղի : »  
« Եւ հիմա դուք ու ես երկինք կ'եր-  
թանք : »  
« Այդ չեմ գիտեր : »  
« Բայց դուք չըսի՞ք թէ մենք մեղաւոր  
ենք : »

«Շատ մեղաւորներ պիտի չընդունուինք  
երկինք, էտկար: Այսպէս կ'ըսեն: »

«Ի՞նչո՞ւ: »

«Ես այդ հարցին պատասխանելու ձեռնհաս  
չեմ, զաւակու: Չե՞ս կարծեր թէ բաւական խօ-  
սեցանք արդէն ասոր վրայ: »

«Բայց, » առարկեց Էտկար, վարի շրթուն-  
քը ողբալի կերպով կախելով, «ես չեմ ուզեր  
երկինքէն դուրս մնալ, Հարիւրապետ կրէյըմ,  
և չեմ հասկնար միտքդ: Խօսքդ կը փոխես  
դուն: Ըսիր թէ Յիսուս մնուաւ, որպէս զի մննք  
երկինք երթանք: Ինչո՞ւ պիտի չկրնանք եր-  
թալ: »

«Դուն կրնաս—և անշուշտ պիտի երթաս: »

«Ուրեմն դուք ալ կրնաք, այնպէս չէ: »

«Եթէ ուզեմ, կարծեմ կրնամ: »

«Միթէ չէք ուզեր: »

«Խորհած չեմ բնաւ: »

Էտկար շուարուն երեւոյթ մը առաւ: Բայց  
վստահութիւն ունէր իր Հարիւրապետին վրայ,  
և գիտէր թէ, եթէ անոր խօսքերը երբեմն  
մթին կ'ըլլային, պատճառը ոտ էր որ ան մեծ  
էր և իրմէ շատ աւելի բան գիտէր:

«Լազը քժիշկս պիտի գայ, » ըսաւ երկար  
լուսթենէ մը ետքը: «Երկու շաբաթն անդամ  
մը կոնտոնէ կու գայ զիս տեսնել: Ուստի վար  
առաւոտ հոս պիտի չըլլամ: Շատ աղնիւ մարդ-

է, բայց շատ կը հրմշակէ զիս, և միշտ կը  
մեկնի ըսելով, ‘Ոգեւորուելու ես, տղաս:’  
Իբր թէ քիչ գրգռած ըլլար զիս հրելով ու  
ցնցելով: »

«Ի՞նչպէս կրնայ օդնել քեզի, կը կարծէ: »

«Անգամ մը հօրս ըսաւ թէ բնաւ արգելք  
մը չկայ որ ես մեծնամ, առողջ մարդ մը ըլ-  
լամ: Միայն գրգռուելու և զուարձանալու  
պէտք ունիմ: Հայրա ալ իր զբոսանաւով  
պարացուց զիս ամէն կողմ: Բայց ես չոգե-  
ւորուեցայ բնաւ և ճամբորդութիւնը չաւար-  
տած՝ ձանձրացայ: »

«Դժուար է քեզ գոհացնել, տղայ: »

«Հիմա ոչ, Հարիւրապետ կրէյըմ: Զանձ-  
րոյթի այդ զգացումը անցաւ գրեթէ: Հի-  
մա սա Բարի Լուրիս ամբողջութիւնն հաս-  
կընայի: »

Այս անգամ աւելի երկար ժամանակամի-  
ջոց մը անցաւ մինչև Էտկար ու իր բարեկա-  
մը նորէն զիրար գտան: Օրերը փոթորկալից  
էին և ծովափ գացող չկար բաց ի քանի մը  
հոգիներէ, որոնք հովէ ու անձրեէ չեն ազ-  
գուիր, կը կարծէին:

Հարիւրապետ կրէյըմ սրտին նեղութենէն  
վեր վար կը քալէր Թոյըլ Պանդոկի իր հան-  
գըստաւէտ յարկաբաժնին մէջ:

«Հոս բնակութիւնս բաւական տեւեց Փա՛ռք:

Աստուծոյ, արձակուրդու լմնալու վրայ է: Ուեէ  
գործ ասկէ աւելի աղէկ է: Սակայն ո՞րքան  
զգուած եմ անոնցմէ, որոնց հետ ըլլալ պիտի  
ստիլուիմ: Կը խորհիմ հրաժարիլ, սակայն  
ի՞նչ պիտի ընեմ այնուհետեւ: Ի՞նչ բան զիս  
հոս կը պահէ՝ չեմ գիտեր, արդեօք այն տղա՞ն  
է: Կ'արժէ զիրք մը գրել անոր վրայ: Կար-  
ծեմ լաւ կ'ըլլար որ մեռնէր, բայց կ'երեւի  
թէ կեանքի հետ նոր պայմանագիր կնքած է:  
Կ'երեւակայեմ հօրը բարկութիւնը, երբ վե-  
րադառնայ ու իմանայ թէ ի՞նչ նիւթ կ'զբա-  
զեցնէ տղուն միտքը: Արդեօք ես անոր ուսու-  
ցի՞չը պիտի համարուիմ:»

Այս մտածումը այնչափ ծիծառաշարժ թուե-  
ցաւ որ Հարիւրապետ Կրէյըմ քրքիչ մը ար-  
ձակեց բոլոր սրտով: Սակայն պարապութիւն  
մը կար քրքիչին մէջ, որու անմիջապէս հա-  
ռաչ մը յաջորդեց:

## ԳԼՈՒԽ Ե

ՊՐՈՊՐԵՆ ՄԷՋՆԸՐ

«Ազնիւ բարեկամո,

«Կ'ուզեմ որ գաք տեսնէք զիս: Դայեակը  
կ'ըսէ թէ դուք այս նեղութիւնը յանձն պիտի  
չառնէք, բայց ես վստահ եմ թէ պիտի առնէք:  
Դուրս չեմ կրնար ելլել, ինչու որ շատ կ'անձ-  
րեւէ: Շատ երջանիկ եմ: Հօրս գրեցի և ամէն  
բան պատմեցի անոր: Դայեակը շատ բարկա-  
ցաւ, բայց կ'ըսէ թէ կը բարկանայ, ինչու որ  
գիտէ թէ հայրը պիտի բարկանայ: Զեմ հաս-  
կընար ի՞նչ ըսել կ'ուզէ, և կ'ուզեմ որ բա-  
ցատրէք ինծի: Խնծրեմ, շուտ եկէք: Տր-  
ֆարքը ինծի ուրիշ բաներ ալ ըսաւ:

«Սիրալիր բարեկամդ

«Էտկար Ուալէս»

ՄԷԿ Երկու օր ետքը ճաշի ժամանակ այս  
նամակը Հարիւրապետ Կրէյըմի յանձնուեցաւ:  
Ժամ մը ետքը Հարիւրապետը անձրեւազգեստն

Հագնելով ճամբայ ելաւ դէպի ի Պրոթըն Մէյնըր։  
Անձրեւազգեստին մէկ գրապանէն ջերանոցի  
խաղողի ծրար մը կ'երեւէր, միւսէն ալ Ֆրան-  
սական շաքարի ծրար մը։

Գտաւ էտկարը բազմոցի մը վրայ ճոխապէս  
զարդարուած սրահի մը մէջ, որ ապարանքը  
շրջապատող գեղեցիկ ծառաստանին կը նայէր։

Էտկար ճառագայթող դէմքով մը իր փոք-  
րիկ ձեռքը երկարեց հիւրին, ըսելով,

«Գիտէի թէ պիտի գաք։ Ո՞րչափ կարօտ-  
ցայ ձեզ։ Շատ բան ունիմ պատմելու։ Սա  
հօրս բազկաթոռն է — շատ հանդիստ կ'ըլլաք  
հոն—նստէք, թէւ ոչ մէկու, նոյն իսկ բժիշ-  
կիս, թոյլ կու տամ նստիլ հոն։»

Հարիւրապետ կրէյըմ նստաւ ժպտելով,  
ապա հանեց իր նուէլները և էտկարի դէմքը  
նորէն փայլեցաւ։

«Դուք բարի բարեկամ էք,» ըսաւ զուար-  
ճալի շեշտով՝ ձեռքերը դէպի ծրարները եր-  
կարելով։ «Դիտէք, դուք հոս — լոկ ինձի  
համար եկող — առաջին ալցելուն էք։ Հիմա  
դէմ առ դէմ պիտի խօսակցինք երկու պարոն-  
ներու պէս։ Նախ պիտի խօսինք, յետոյ հօրս  
պէս թէյ պիտի խմենք։ Արդեօք սմւրճ կը  
նախընտրէիք։ Սեղանապետ Սիմընտղի պատ-  
ուիրեցի որ երթայ ամենահամեղ խմորեղէն-  
ներ գնէ և ափաէով մը մեղի մատուցանէ։

Կ'ուզեմ դիտել ձեղ երբ թէյ կը խմէք հօրս  
քարեկամներուն պէս, որոնց շատ հաճելի է  
հոս հաւաքուիլ թէյի համար։»

«Շնորհակալ եմ,» ըսաւ Հարիւրապետ  
կրէյըմ լրջօրէն, թէւ առանց իր կամքին՝ աշ-  
քերը փայլեցնելով։ «շատ հաճելի պիտի ըլ-  
լայ այդ։ Ըսէ նայիմ, ի՞նչ ըրիր այս փոթո-  
րիկներուն ժամանակ։ Մահու չափ ձանձրա-  
ցա՞ր։»

«Ոչ, ոչ,» ըսաւ էտկար փութով, աղ-  
դուապէս դէպի առաջ ձուելով և կապոյտ աչքե-  
րը յուզումէն փայլեցնելով։ «Յիսուսը ձանչ-  
նալ սորվեցայ։ Կ'ուզէ՞ք մտիկ ընել։»

Հարիւրապետ կրէյըմ աւելի հանդիսա-  
դիրք մը առաւ կրնակը տալով աթոռին որու-  
վրայ նստած էր, և ոտքը ոտքին վրայ դրաւ-  
պատասխանելով,

«Շատ կ'ուզեմ, էտկար։»

«Ինձի օգնողը բժիշկս եղաւ։ Երբ եկաւ  
վիս հրել մշտել, ըսի անոր, Յաւալի չէ՞ տոք-  
թոր, որ Յիսուս հոս չէ։ Ինք պիտի առողջա-  
ցնէր զիս առանց այս յոգնեցուցիչ հրմշտու-  
քին։ Արդեօք դուք տեղեկութիւն ունի՞ք ա-  
նոր վրայ։ Ըսաւ թէ ունի, ու նստաւ շատ  
բան պատմեց ինձի — ձիշտ ինչպէս դուք կը  
պատմէիք։ Ըսաւ թէ անոր խօսելու եմ, իբր  
թէ աթոռիս քով կայնած ըլլար, վասն զի ի-

րոք հոն է ինք, բայց ես չեմ տեսներ: Յետոյ-  
ծնրադրեց հոս գորգին վրայ — ճիշտ իմ ու-  
ձեր մէջտեղը — և խօսեցաւ անոր: Ապա ինձի-  
հարցուց թէ կ'ուզե՞մ արդեօք խօսիլ անոր:  
Ես ալ խօսեցայ քանի մը բոպէ ետքը: Նախ-  
ամցայ քիչ մը:

«Եւ ի՞նչ ըսիր, զաւակս:»

«Ըսի, Սիրելի Յիսուս, կը յուսամ թէ ին-  
ծի պիտի ներես քեզի խօսելուս համար, ին-  
չու որ գիտեմ թէ դուն զարմանալի մէկն ես:  
Բայց իմ Բարի Լուրս ինձի կ'ըսէ թէ դուն-  
շատ բարի ես աղայոց: Ուստի գիտեմ որ ին-  
ծի մտիկ պիտի ընես: Կ'ուզեմ շատ չնորհակալ  
ըլլալ որ ինձի համար մեռար, և ուրախ եմ  
որ գիտեմ թէ ես մեղաւոր եմ, ինչու որ  
դուն մեղաւորները կը սիրես: Քեզ լաւ չեմ  
ճանչնար դեռ, բայց կը սիրեմ: Կը հաճիս  
ինձի բարեկամ ըլլալ և խօսիլ ինձի երբ ա-  
ռանձին ու անմիտար զգամ: Կարծեմ, այս-  
էր ըսածս: Յիշեցի թէ նամակ մը զրկեցի ի-  
րեն և հարցուցի թէ գոհ եղա՞ւ: Կարծեմ այս-  
էր ամէնը:»

«Յետոյ ի՞նչ եղաւ:»

«Յետոյ բժիշկս ուրիշ բաներ ալ ըսաւ:  
ինձի: Երեւակայեցէք: Կրնամ Տէր Յիսուս-  
սէ ինդրել ի՞նչ որ ուզեմ: Եւ եթէ ինձի  
համար բարի է, կու տայ ինձի: Կարծեմ

դուք ալ գիտէք, այնպէս չէ՝, Հարիւրա-  
պիտ:»

«Կարծեմ գիտեմ:»

«Բայց սիրուն չէ: Եւ ի՞նչ բաներ, ի՞նչ  
բաներ խնդրեցի: Կարգ մը բաներ տուաւ ար-  
դէն: Ինդրեցի որ Սարայի մօր լուացքի գործ  
տայ — Սարա մեր սպասուհիներէն մէկն է որ  
շատ լաւ կը վարուի ինձի հետ, և մայրն այն-  
չափ աղքատ է որ միայն Կիրակի օրեր կրնայ  
միս ուտել — և երէկ Յիսուս տիկին մը զրկեց  
որ անոր քիչ մը գործ տուաւ — Սարա այս առ-  
տու ըսաւ ինձի: Ինդրեցի որ գտնէ ուե կա-  
տուի ձագը ու տուն զրկէ, և չթողու որ հայրը  
բարկանայ ինձի, դայեակն ըսաւ թէ պիտի  
բարկանայ: Դարձեալ, ինդրեցի որ ձեզ զրկէ  
տեսնել զիս այսօր — դայեակն ըսաւ թէ դուք  
այս յոգնութիւնն յանձն պիտի չառնէք — և  
յետոյ խօսեցայ խոհարարին վրայ, որ ինձի  
բրնձի փուտինկ կը զրկէ կէսօրուան ճաշի հա-  
մար և կ'ըսէ թէ պատիկ տղայոց աղէկ է, թէւ-  
գիտէ թէ բնաւ չեմ սիրեր: Յիսուսի աղաչե-  
ցի որ բրինձն աւրուի, որպէս զի խոհարար  
չկրնայ եփել: Յիշեցի Սիմենտի եղբօր-  
որդին, որու ոտքը կոտրեցաւ և որ ստիպուե-  
ցաւ նաւաստիութենէ հրաժարիլ՝ նշանածին  
աչքէն ելլելով: Ուստի ինդրեցի որ կակղացնէ  
օրիորդին սիրաը: Չեմ կրնար ամէն բան պատ-

մել: Անդադար կը խօսիմ անոր, և ամէնէն աղէկը ի՞նչ է՝ գիտես: Բնաւ չձանձրանար մը տիկ ընելէ և միշտ իմ քովս է, ինչպէս կ'ըսէ բժիշկը:»

«Եւ ի՞նչպէս գտաւ քեզ բժիշկը: Աւելի աղէկ:»

«Այո, շատ աւելի աղէկ: Կ'ըսէ թէ գտած եմ վերջապէս զիս աղէկցնող դեղք: Չեմ հասկնար ճիշտ ի՞նչ ըսել ուզեց, դուք կը հասկնա՞ք:»

«Կարծեմ ըսել ուզեց թէ քեզ հետաքրքրող բան մը գտած ես, զաւակս:»

«Այո, հիմա ներսիդիս յոգնութիւն, ձանձրոյթ չեմ զգար: Այս է կեանքիս ամենամեծ անակնկալը: Երանի՛ թէ մէկը աւելի կանուխ յայտնէր ինծի այս բանը: Յետոյ, Հարիւրապետ կրէյըմ, կը տեսնեմ թէ կրնամ Յիսուսի համելի բաներ ընել: Ինք կ'ուզէ որ համբերող ըլլամ և դայեակին 'կախերես' չըսեմ ու դեղերս չնետեմ, երբ լեղի են: Կ'ուզէ որ, որչափ կարելի է, իրեն պէս մեծնամ, և հարկաւ այս բաւական աշխատութիւն կու տայ ինծի, ինչու որ բան մը ընելէ առաջ կ'ստիպուիմ շատ անգամ կենալ ու մտածել: Առաջ կը ջանայի բարի ըլլալ, ինչու որ օրիորդն այդպէս կ'ուզէր: Բայց հիմա զիտեմ թէ իմ չարութիւնս կը տիրեցնէ ու կը վշտացնէ զինք: Եւ ես չեմ ուզեր տրտմեցնել, կը սիրեմ զինք:»

Էտկար երջանկութեան հառաչ մը արձաւ կելով կրնակի բարձերուն կրթնեցաւ յոգնութիւն առնելու համար: Իսկ Հարիւրապետ կրէյըմ պատուհանէն դուրս կը նայէր մտած կոտութեամբ:

«Ինծի կը թուի թէ, էտկար, դուն շատ աւելի բան գիտես հիմա քան այս աշխարհի մարդոց շատ շատերը: Գրպանիս մէջ բան մը ևս ունիմ քեզի համար: Շաբաթէ մը պիտի մեկնիմ, զօրագունդիս պիտի միանամ: Ուստի խորհեցայ քեզի ամբողջ մէկ օրինակը տալ Բարի Լուրին, ինչպէս կը կոչես դուն: Եթէ հայրդ չսիրէ, թող առնէ քեզմէ, երբ զայ: Հիմա գլխուդ մէջ դուն բան մը ունիս զոր ոչ ոք կարող է դիւրաւ առնել, և եթէ այն երջանիկ կ'ընէ կեանքդ, անդթութիւն է քեզ անկէ զրկել: Դայեակիդ ըսէ թէ ես տուի քեզի, և թէ ներկայ պարագաներուն մէջ լաւ է որ քովդ մնայ:»

Հարիւրապետ կրէյըմ Նոր Կտակարան մը դրաւ տղուն ձեռքը: Փառակազմ էր այն, Ռուսական կաշիով, և երբ էտկար հասկցաւ թէ ի՞նչ էր, դէմքը ճառագայթեց բոլորովին:

«Դուք շատ աղնիւ էք ինծի հանդէպ: Չեմ գիտեր թէ ի՞նչ պիտի ընեմ, երբ երթաք: Երանի՛ թէ չերթայիք: Նայեցէք, դուք զիտէք բոլոր այս բաները և կրնամնք մէկտեղ

Խառնիլ անոնց վրայ: Եթէ երթաք, մէ՛կը պիտի չունենամ: Բժիշկս պիտի չգայ երկար ժամանակ: Կը բարկանա՞ք եթէ Տէր Յիսուսէ խնդրեմ որ ձեղ հոս կեցնէ: »

« Զինդրես, աւելի աղէկ: Նայէ, Էտկար: Կը կարծեմ թէ օդը բացուելու վրայ է: Ահա արեւը կը ծագի նորէն: Եթէ վաղը օդը լաւ ըլլայ, կ'ուզե՞ս ծովափը գալ: »

« Այս, » ըստ էտկար գոհունակութեամբ և իր նոր գանձը թղթատելով: « Կը յուսամ գալ և ձեղ ալ հոն գտնել: »

« Հաւանականաբար, բայց հիմա պէտք է որ մեկնիմ: »

« Սպասեցէք բոպէ մը: Կը հաճի՞ք զարնել սա զանդակը, խնդրեմ: Զիմ կրնար ոտքի ելլել: »

Իսկոյն պատկառելի մարդ մը ներս եկաւ, ձեռքը թէյի ափսէնով: Էտկար մեծ մարդու յատուկ բոլոր լրջութեամբ թէյ մատուց իր բարեկամին: Հարիւրապես կրէյըմ ալ ընդուռացաւ նոյնքան լրջութեամբ: Ապա էտկար փոքրիկ ձեռքով ցոյց տալով իր բարեկամը սապէս ըստ սպասաւորին:

« Միմընտղ, այս իմ բարեկամս է: Տեսած չէիր զայն: Իմ շատ հին և պատուական բարեկամս է: Ես զինք շատ աւելի կը սիրեմ այն բարեկամներէն որ դուն ու դայ-

Աւակը կը ջանաք ինծի համար գտնել: Ես ընտրեցի զինք — կամ գէթ երկուքս մէկտեղ ընտրեցինք իրար, այնպէս չէ՝ Հարիւրապետ: »

« Ծիտակ է, էտկար: »

« Նայէ, Միմընտղ, Հարիւրապետ կրէյըմ ինծի բերած է փառաւոր Բարի Լուր մը, որ իմ ունեցածէս շատ աւելի բան կը պարունակէ: Եւ, գիտես, Հարիւրապետ կրէյըմ է որ զիս երջանիկ ըրաւ վերջապէս: Ուստի պէտք է որ անոր չնորհակալ ըլլաս: Միշտ կ'ըսէիր թէ երանի՛ թէ այսքան դժբախտ չըլլաս: Ինք է որ ինծի առաջին անդամ խօսեցաւ Յիսուսի վրայ: »

Ծերուկ սպասաւորը բարութեամբ ժպտեցաւ աղուն:

« Կը ներէք, աէր, նախորդ վիճակին նայեյլով հիմա շատ լաւ է, » ըստ և անշշուկ մեկնեցաւ: Քանի մը բոպէ յետոյ Հարիւրապետն ալ հրաժեշտ առաւ:

Մարդուն միտքը շատ զբաղ էր քաղաք երթալու պահուն:

« Զարմանալի՛ բան՝ տղու մը հոգին գոհացնելու համար, » ըստ ինքնիրեն: « Պիտի տեւէ՞ արդեօք և — ենթադրելով թէ ես ալ հաւատամ — կարելի է՞ արդեօք որ իմս ալ գոհացնէ: »

## ԳԼՈՒԽ Զ

Օղը բացուեցաւ, և շատ քիչ էին այն առաւաօտները երբ երիտասարդ զինուորն ու պզտիկ տղան չէին միանար ծովափին վրայ։ Երբեմն կանգար կը խնդրէր գլուխ մը բանալ իր նոր Կտակարանէն ու կարդալ։ Յետոյ եւ իր նոր Կտակարանէն մը կ'ըլլար։ Գոնէ, ունդուն խօսակցութիւն մը կ'ըլլար։ Գոնէ, եթէ եռանդը լոկ տղուն կողմէ ալ ըլլար։ Հարիւրապետ Կրէյըմ չէր զգացներ, և յարուցուած խնդիրներն ու ձեռք բերուած եղակացութիւնները զարմանալի կերպով նոր ու վճռական կը գտնէր։

Բայց վերջին առաւաօտն եկաւ, և կտկարի պայծառ գէմքը սկսաւ տիրիլ մեկնուամի ժամուն մօտենալուն համար։

«Երբեմն պիտի գրէ՞ք ինծի, Հարիւրապետ։ Կրէյըմ։ Ես միշտ ձեր վրայ պիտի խորհիմ։»

«Կը խոստանամ երբեմն գրել, տղաս։»

«Եւ, Հարիւրապետ Կրէյըմ, վերջերս շատ շիոթ է միտքս — չեմ հասկնար լաւ — և տիսուր եմ։»

Հոս կանգ առաւ կտկար, իր բարեկամին երեսն ի վեր նայեցաւ կարօտով, և յետոյ գլուխն երերցուց տիրութեամբ։

«Ի՞նչ կայ, տղաս», հարցուց Հարիւրապետ Կրէյըմ զարմացումով։

Կտկար իր փոքրիկ ձեռքը դրաւ ուսին վրայ կեցող զօրաւոր ձեռքին մէջ և ըսաւ,

«Ինչո՞ւ այսպէս տիսուր էք գուք որ այսքան բան գիտէք Յիսուսի վրայ։ Ես երբեք այդպէս պիտի չըլլայի, եթէ աւելի առաջ գիտցած ըլլայի ասոնք։ Եւ սակայն դուք ինծի չափ տիսուր ու տրատում էիք։»

«Ասոնք ինծի նորութիւն չեն, ինչպէս ենք քեզի, կտկար։»

Հարիւրապետին ձայնը վարանում կը մատնէր։ Զէր ուզեր որ իր վրայ տղուն վստահութիւնը խախտէր, միւս կողմէ ստիպուած էր բուն ձշմարտութիւնն ըսել անոր։

«Ես այս ամէնը մուցած էի, տղաս։ Ասոնք ինծի այնպէս չեն ազդեր, ինչպէս կ'ազդեն քեզի։ Յանցանքն իմս է, կարծեմ։ Դուն արդէն իսկ շատ աւելի տեղեակ ես անոնց քան ես։»

«Ինչո՞ւ,» ըսաւ կտկար աչքերը բանալով։ «Ես ամէնը գուք ըսիք ինծի։ Եւ գուք բացատրեցիք գեղեցկապէս բոլոր խրթնութիւնները։ Ինչո՞ւ, Հարիւրապետ Կրէյըմ։ Եթէ

գուք չըլլայիք, ես բնաւ տեղեկութիւն պիտի  
չունենայի Յիսուսի վրայ։»

«Անդիրը մեր անոր վրայ տեղեկութիւն ու-  
նենալուն մէջ չկայանար, Էտկար Մենք ամէնս  
ալ որ կը պարծինք թէ Քրիստոնեայ ենք՝ գի-  
տենք գլխաւոր բաները Յիսուսի վրայ: Բայց  
շատերս օգուտ մը չենք քաղեր ատկէ: Այդ  
պղտիկ գլուխդ մի յոգնեցներ ինձի համար:  
Դուն քու հաւատքովդ երջանիկ աղայ մըն  
ես: Այդպէս շարունակէ և երբ քու նոր Բա-  
րեկամիդ աղօթես, մի մոռնար զիս։»

Էտկար գլխով հաստատական պատասխան  
տուաւ և յարեց. «Ան ձեր վրայ ամէն բան  
գիտէ, Հարիւրապետ Կրէյըմ: Ես ամէն բան  
ըստած եմ: Պիտի խնդրեմ որ ձեզ աւելի եր-  
ջանիկ ընէ, և պիտի ընէ անշուշ: Ոհ, պիտի  
երթա՞ք վերջապէս, Հարիւրապետ Կրէյըմ։»

Եւ թէև վայրը ծովափն էր, երիտասարդ  
զինուորը չամչցաւ ծովի ու գրկուիլ վզին փաթ-  
թուող երկու փոքրիկ թեւերով և իր արեւէն  
այրած այտերուն վրայ ընդունիլ երկու փոքր  
գողդուն շուրթներու համբոյրները:

«Երթա՞ք բարով: Պիտի ջանամ չարտմիլ:  
Հիմա շատ հոգ չեմ ըներ յուսախաբութիւն-  
ներու համար: Բայց ձեզ բնաւ, թնաւ պիտի  
չմոռնամ։»

Մինչ կը հեռանար Հարիւրապետը, անոր

ականջներուն մէջ կ'արձագանգէր խեղճ էտ-  
կարի այս վերջին խօսքը, « Զեզ բնաւ, թնաւ  
պիտի չմոռնամ։» Ան սկսաւ մտածել թէ ինչ  
պիտի ըսէին իր սպայ ընկերները, եթէ գիտ-  
նային թէ որո՞ւ հետ անցուց իր արձակուր-  
դին վերջին մասը:

«Իրօք,» ըսաւ մրմնջելով, «ես այդ տղուն  
հաւատքին ու երջանկութեան կը նախանձիմ,  
մինչեւ իսկ տրամադիր եմ անոր օրինակին հե-  
տեւիլ: Ինչ որ գտած է ան՝ կրօնք մը չէ, այլ  
իրական Անձ մը, որ ահագին տարբերութիւն  
կ'ընէ։»

Հարիւրապետ Կրէյըմ իր գունդին միացաւ  
և սկսաւ հին դրութեամբ ապրիլ: Բայց տա-  
րօրինակ համոյքով կ'սպասէր էտկարէ եկող  
նամակներուն, և ի զուր կը ջանար խեղճել  
իր սրտին անհանգստութիւնն ու խոռվքը: Ի-  
րիկուն մը այդ տարօրինակ նամակներէն մին  
ստանալէ ետեւ, իր սենեակը քաշուեցաւ մըտ-  
քին մէջ հաստատուն նպատակ մը ունենա-  
լով, այն է՝ միանգամ ընդ միշտ վճռել թէ  
այս կրօնքը իր հոգին գոհացնող բան մը ունի  
թէ ոչ լոկ անմեղ աղայոց ու տկար և գիւրա-  
հաւան կիներու յարմար է:

«Այլեւս չեմ կրնար տոկալ այս անձկալից  
մտածումներուն,» ըսաւ ինքնիրեն բարկու-  
թեամբ: « Զեմ կրնար ըսել թէ այս ո՛քան

Կ'զբաղեցնէ միտքս. Ի՞նչ ալ ընեմ, չեմ կրնար՝  
միտքչս հանել, գիշեր ցորեկ հանդիստ չու-  
նիմ»:

Յետոյ նորէն բացաւ իր առջև տղուն նա-  
մակը.

«Սիրելի, սիրելի բարեկամս,

«Շատ ուրախացայ սիրուն նամակդ ստա-  
նալով, կը սիրեմ լսել փողերու, զինուորնե-  
րու և խելացի ձիուդ վրայ: Այնչափ արագ  
կ'աղէկնամ որ բժիշկս գրեց թէ թերեւս պի-  
տի կրնամ քիչ ատենէն ձի նատիլ փոխանակ  
կառքով հոս հոն տարուելու: Ի՞նչ աղուոր  
պիտի ըլլայ այդ: Սիրելի հայրս շատ հիւանդ  
է: Այն օրէն ի վեր երբ գրեցի անոր թէ ի՞նչ  
Բարի լուր մը գտայ՝ չգրեց բնաւ: Դայեակին  
գրելով պատուիրած է որ չյանդիմանէ զիտ,  
ինչու որ քիչ ատենէն պիտի մոռնամ ամէնը:  
Չեմ հասկնար թէ ի՞նչ ըսել կ'ուզէ, դուք կը  
հասկնա՞ք: Ավրիկէի մէջ տենդի մը բռնուած  
է: Տէր Յիսուսի կ'աղօթեմ որ առողջացնէ և  
շուտով ետ զրկէ զայն: Սիրելի Հարիւրապետ  
հիմա աւելի երջանիկ չէ՞ք: Ես ամէն օր աւե-  
լի երջանիկ կ'ըլլամ: Չեզի համար կը խօսիմ  
Յիսուսի և կ'զգամ թէ շատ կը ցաւի ձեզի  
համար ալ: Ինք կ'ուզէ որ մարդիկ երջանիկ  
ըլլան: Այսպէս կ'ըսէ Բարի լուրս: Բո՞ք ա-

նոր թէ ի՞նչ ունիք: Կարծեմ ըսած էք: Բան  
մը չկայ զոր չկրնայ ընել: Կա՞յ: Ամէնէն զար-  
մանալի բանը որ ինծի ըրաւ՝ զմելիիս գիւտն  
է: Զմելիս հօրս նուէրն էր, իմ անունս կը  
կրէր իր վրայ և կորսուած էր ամիսներէ ի  
վեր: Երբ իմացայ թէ ինչ որ ուզեմ՝ կու տայ,  
խնդրեցի որ գտնէ զայն: Դայեակին ըսի թէ  
պիտի գտնեմ, բայց խնդրաց վրաս: Եւ երէկ թէքս  
ինծի բերաւ զայն իր բերնով: Պարտէզին մէջ  
գտած էր չոր տերեւներու գէզի մը տակ: Յի-  
սուս ըսած էր թէքսի թէ ուր կը գտնուի  
այն: Ինք գիտէ թէ թէքս ուրչափ կը սիրէ  
բան գտնել: Թէքս շատ երջանիկ եղաւ, նմա-  
նապէս ես: Դայեակը կ'ըսէ թէ ա'լ մի գրեր:  
«Չեզ սիրող բարեկամդ


«Էտկար»

«Ես ըսի՞ Անոր թէ ի՞նչ է իմ ցաւս: Հար-  
կաւ ըսի: Ես ալ չեմ գիտեր որ: Եթէ սա  
Գիրքը ճշմարիտ է, հանգիստ պիտի ըլլամ  
բնաւ մինչև ըսեմ Անոր: Եւ ես հոգւովս կը  
հաւատամ ասոր ճշմարտութեան: Դժուարու-  
թիւնը սակայն գործի սկսելն է: Էտկար գիւ-  
րութեամբ ըրաւ այս բանը: Եթէ մարդ կարե-  
նայ նորէն տղայ ըլլաւ, կը գիւրանայ գործը,  
բայց որովհետև չեմ————»

Հոս ոտքի ելաւ Հարիւրապետ Կրէյըմ:  
Չեռքը Սուղբ Գիրք մը ունէր և անտարբե-

բութեամբ կը թղթատէր էջերը։ Բայց ահա  
իր աչքերուն առջև եկան սա բառերը, որոնք  
անոր հոգիին մինչեւ խորերը թափանցեցին։

«Եթէ դարձի չգաք և տղոց պէս չըլլաք, եր-  
կինքի թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք։»



«Ուստի ով որ իր անձը այս տղուն պէտ-  
խոնարհեցնէ, ան է մեծ երկինքի թագաւորու-  
թեան մէջ։»

Մտածեց երկար ատեն։ Երբ կէսպիշեր ե-  
ղաւ, ծունկի վրայ եկաւ ու աղաղակեց,  
«Կը հաւատամ, Տէր, օգնէ իմ անհաւա-  
տութեանս։»

## ԳԼՈՒԽ Է

«Սիրելի բարեկամս,  
«Նեղութեան մէջ եմ։ Լացի ամբողջ օրը։  
Հայրս, սիրելի հայրս, մեռեր է և ա'լ պիտի  
չտեսնեմ զինք մինչեւ երկինք երթամ։ Դայեա-  
կը երէկ իմացաւ, և այսօր բժիշկս զիս տես-  
նել եկաւ, նաև հօրաքոյրս զոր չէի ճանչնար,  
ինչու որ հայրս անոր արգիլած էր զիս տեսնել,  
բայց հօրս քով գտնուեցաւ անոր մահուան  
ժամուն, ինչու որ ետ գալու պահուն մինչեւ  
Փլիմըթհ հասաւ ու հոն մեռաւ։ Հօրաքոյրս կը  
ճանչնայ և կը սիրէ Տէրը ինծի և ձեզի պէս՝  
և ուրախ եմ որ հիմա երջանիկ էք դուք ալ։  
Հօրաքոյրս ինծի տուաւ նամակ մը, զոր հայրս  
սկած է գրել ինծի ու չէ կրցած լմնցնել։  
Հայրս անոր պատուիրեր է զիս իր քով առնել,  
և կամ գալ ու ինծի հետ բնակիլ։ Ուստի ինք  
հոս եկաւ, վասն զի ես չեմ ուզեր մեկնիլ։ Հօ-  
րաքոյրս կ'ըսէ թէ կրնամ ձեզի զրկել հօրս  
նամակը։ Լսի թէ հօրմէս ետքը ձեզ կը սիրեմ։  
ինք ըստ թէ պիտի ուզէք տեսնել նամակը և

թէ աւելի լաւ պիտի հասկնաք զայն, եթէ  
տեսնէք իմ նամակս ալ, զոր հայրս իր բար-  
ձին տակ կը պահէր և հօրաքոյրիս տուաւ երբ  
պիտի մեռնէր: Ես այս բաներն աղէկ չեմ հաս-  
կընար, բայց ձեզի կը զրկեմ երկու նամակն  
ալ: Զիս տեսնել պիտի գա՞ք: Իրօք շատ  
նեղուեցայ հօրս մահուան համար, բայց Յիսու-  
սի ըսի, և հանդարտ նստած եմ, ու ինք զիս  
կը միսիթարէ:

«Ձեզ սիրող բարեկամդ  
«Էտկար:»

Ահաւասիկ նամակը զոր էտկար իր հօրը  
գրած էր.

«Սիրելի հայրս,

«Այսօր շատ բան ունիմ քեզի պատմելու: Եւ  
ուրախ պիտի ըլլաս, եթէ դիտնաս թէ վեր-  
ջապէս երջանիկ եմ հիմա: Ես գտայ ամէնէն  
զարմանալի գիրքը, որ Բարի Լուր կը նշանա-  
կէ, և ամբողջովին ճշմարիտ է: Ծովէն եկաւ և  
թէքս բերաւ ինծի իր բերնով, Հարիւրապետ  
Կրէյըմ ալ շատ բան յայտնեց յետոյ: Երանի  
թէ կարենայի քեզի պատմել անոր պարունա-  
կութիւնը, բայց չեմ կրնար այնչափ բան գրել:  
Սքանչելի Մարդ մը կայ, այնչափ բարի ու  
աղնիւ: Սիրեցի զայն, երբ կարդացի իր վրայ:  
Եւ ինք իրօք ողջ էր ատեն մը, բայց սպան-

նուեցաւ ու նորէն կենդանացաւ ետքը, ինչու  
որ ոչ մէկը իրաւունք ունէր զայն սպաննելու:  
Աստուած էր ան, և երկինք համբարձաւ, բայց  
ոչ միայն կը մնայ հոն, այլեւ կը պարտի ամ-  
բողջ աշխարհն բայց մենք չենք տեսներ զինք:  
Ամէն մարդ կը սիրէ, կը սիրէ զիս, կը սիրէ  
քեզ ալ: Անունն է Տէր Յիսուս: Լսա՞ծ ես իր  
վրայ, հայր, ինչու որ բնաւ բան մը ըսած չես  
ինծի: Հարիւրապետ բարեկամս ամէն բան  
պատմեց անոր վրայ: Թէ ի՞նչպէս մեռաւ,  
ինչու որ կ'ուզէր որ մենք գեղեցիկ տեղ մը եր-  
թանք երկինքը, ուր պիտի չկրնայինք երթաւ,  
եթէ ինք չմեռնէր: Հոգէ չըրաւ թէ ո՛րչափ վիշտ  
ու չարչարանք կրեց, գիտնալով թէ կրցաւ  
մեղ երջանիկ ընել իր չարչարանքին միջո-  
ցով: Կ'ուզէ որ մենք խօսինք իրեն, և միշտ  
մտիկ կ'ընէ: Տը, Փարքըր կ'ըսէ թէ Ան ինծի  
կու տայ ի՞նչ որ խնդրեմ, եթէ օգտակար է:  
Իմ Բարի Լուրս կ'ըսէ թէ Ան կը սիրէ մեղա-  
ւորները, և ես ու Հարիւրապետս ալ մեղաւոր  
Անք: Դուն ալ մեղաւո՞ր ես, հայր: Կը յու-  
սամ թէ ես, ինչու որ Յիսուս մեղաւորներու  
համար մեռաւ: Ի՞նչ աղուոր է ամէն բան ըսել  
Յիսուսի: Ես ամէն բան կ'ըսեմ անոր, և բնաւ  
առանձնութիւն չեմ զգար: Ինք կը սիրէ զիս,  
կ'զգամ թէ կը սիրէ: Դայեակը կ'ըսէ թէ պիտի  
բարեկամս ինծի: Պիտի չբարեկանաս, չէ՝

հայր։ Զըսեր թէ ինչո՞ւ պիտի բարկանաս։ Ի՞ք եղօրադջկան աղջիկը ամուսին մը ունի հիմա։ Մեր պահապանին որդին է։ Սիմընտք կ'ըսէ թէ շատ խելացի աղջիկ է։ Մէքս պզտիկ վառեակ մը սպաննեց երէկ։ Պոպ ծեծեց զայն, և լարվ ինձի եկաւ։ Շունն ալ մեղաւոր կ'ըսուի, հայր։ Կը յուսամ որ աղուոր երկար նամակ մը պիտի գրես և ալ շատ պիտի չուշանաս ու գաս։

«Քեզ սիրող որդիդ  
«Էտկար։»

Հօրը նամակը սա էր։

«Ամենասիրելի զաւակս,

«Երկար ժամանակէ ի վեր կը փափաքիմ քեզի գրել։ Երեք նամակ գրեցի ու սպառեցի, չորրորդ մը հօրաքոյրդ չուզեց զրկել։ Հիմա նոր մը կ'ոկսիմ։ Խեղճ հայրդ շատ հիւանդէ, էտկար, և կը վախնամ որ ա՛լ պիտի չտեսնես զիս։ Յու վերջին նամակդ առի, և կրկին կրկին կարդացի։ Շատ ուրախ եմ որ Տրափարը կ'ըսէ թէ տղաս աւելի առողջ ու ուգեւուուած է։ Կը յուսամ որ պիտի մեծնաս ու զօրաւոր մարդ մը ըլլաս, և պիտի կրնաս կեանքդ աւելի լաւ կառավարել քան կրցաւ քու հայրդ, էտկար, կ'զգամ թէ ես սխալ ըրի, Մարդ չկրնար զայս իմանալ մինչև մահան անկողին իյնայ։

«Այո, հաւատա ի՞նչ բանի և որո՞ւ որ կ'ուղես, էտկար։ Իմ գաւանանքս զիս երջաւ ջանիկ չըրաւ, թող քուկդ ընէ քեզ։ Ես քեզի չխօսեցայ բնաւ այն բաներուն վրայ որոնք հիմա քու պզտիկ գլուխդ լցուցած են, ինչու որ————ոչ, աւելի չեմ գրեր Յիշէ զիս սիրով և երբ աղօթեն՝ մի մոռնար զիս։ Պատուէր մը ունիմ քեզի, ճշտութեամբ կատարես։ Այրէ գրատանս մէջ գտնուող ամէն գիրք և ամէն ձեռագիր, բոլոր նամակներս ու բոլոր ծանօթագրութիւններս անխտիր։


«Մնաս բարով, զաւակս։ Հօրաքոյրդ — » (Հայրդ չկրցաւ լմացնել, էտկար։ Ես — Հօրաքոյրդ — կու գամ ու կը պատմեմ ամէն բան։ «Ֆլորէնս Ուալէս»)


Հարիւրապետ կրէյըմ իր սենեակին մէջ կարդաց այս նամակները։

«Են՝ զն պզտիկ։ Արդեօք հայրը գտա՞ւ վերջապէս լոյսը։ Ոհ, էտկար, եթէ գտաւ, դուն երկու մոլորեալ բերած պիտի ըլլաս երկնից թագաւորութիւնը։»

Վ Ե Ր Զ







ՀՀ Ազգային գրադարան



NL0318270

7613